ՇԱԲԱԹ 7 ՓԵՏՐՎԱՐԻ

Հրատարակվում է ամեն օր բացի երկուշաբթի և տօնօրերից։
Ցարեկան գինն է 10 ռուբլի։
Առանձին համարներով իւրաքանչիւրը 5 կոպ.։

Խմբագրատունը բաց է ամեն օր բացի կիւրակէ և տօն օրերից առաւօտեան 10—2 ժամը կէսօրից յետ։

Օտարաքաղաքացիք պիտի դիմեն ուղղակի խմբագրութեան հետևեալ հասցէով. Въ ред. газеты «Мегу Айастани», въ Тифлисъ, կամ Redaction de «Meghou Haïastani», à Tiflis (Caucase).

Խմբագրութեան ուղղած թէ յօդուածները և թէ նամակները պէտք է պարզ գրուած լինին գրողի ստորագրութեամբ և հասցէով։ Խմբագրութիւնը կարող է փոփոխել, ուղղել և կրճատել յօդուածները։ Խմբագրութիւնը իւր վերայ չէ առնում յետ ուղարկել յօդուածները և պահում է երկու ամիս մինչև ցպահանջ։

Յայտարարութիւնների համար վճարում են ամեն մի բառին $1^1/_2$ կոպէկ։
Յայտարարութիւնները ընդունվում են պ. Բ. Շահվերդեանի պավիլիօնում։
Յայտարարութիւնները ընդունվում են հայերէն և օտար լեզուներով։

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

№ 12 ՔՍԱՆԵՒՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ № 12

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

Մի քանի խօսք հայկական ճարտարապետութեան մասին։
Ազգային.—Թղթակցութիւն Աղէքսանդրապոլից։
Քաղաքական.—Ֆրանսիայի արտաքին գործոց պաշտօնէայի բացատրութիւնը.—Քաղաքական լուրեր։
«Մեղու» Հեռագիրներ
Մանր լուրեր
Յայտարարութիւններ
Բանասիրական.—Թղթակցութիւն Կ. Պօլսից։

ԹԻՖԼԻՍ, 6 ՓԵՏՐՎԱՐԻ 1881 Թ.

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

There are m re things in heaven and earth, Horatio,
Than are dreamt of in philosophy.
(Shakespear).

Յայտնի է, որ Հայաստանը մինչև հիմա դեռ մի չքննուած երկիր է մնացել իրան, է եղել են ճանապարհորդներ, որոնք մի քանի խօսք միշել են Հայաստանի մասին իրանց ճանապարհորդութեանց մէջ—բայց այս բոլորը ի միասին ոչ միայն չէ ծանօթացնում, այլ և սխալ դաղափար է տալիս հայկական արուեստի մասին։ Հայկական հին ճարտարապետութիւնը դեռ ոչ ոքին յայտնի չէ, թէև մի շատ մանր հետազօտութիւն կարելի է կարծել խորհնացու մի քանի հայկական քաղաքները նկարագրելուց,—բայց այդ չափազանց քիչ է։

Հայկական ճարտարապետութիւնը նորագոյնեցաւ քրիստոնէութիւնը Հայաստանում տարածուելուց յետոյ. շինուեցան եկեղեցիներ, պալատներ, շողակաթ և հախփախեան վանքերը—այդ է հիմա մեր քննելու նիւթը—քննելու նիւթ, որովհետև նոքա ապացուց ճարտարապետները, այսինքն ճարտարապետութեան սպասաւորները, դոցա ոճը (stile) բիւզանդական *) են անուանում, պատճառն այն նմանութիւնն է, որը ունենք է տալիս նոցա հայկական ճարտարապետութիւնը բիւզանդականից յառաջացած կարծել. նմանութեան հետ համաձայնել կարելի է, բայց բիւզանդականի անուանելը սխալ է, և ահա ինչու. բիւզանդական ճարտարապետութիւնը ծնել է արևելեան կայսրութեան արևմտեանից բաժանուելուց յետոյ *)։ Այդ բաժանումը եղել է 395 թ., մինչդեռ էջմիածինը շինուած է այդ դարի սկզբում. այդ արդէն պարզ ապացուցում է, որ բիւզանդականի հետ ոչ մի կապ չունի. իսկ ինչ որ վերաբերում է նմանութեան, դորա պատճառը հետևեալն է։ Բիւզանդական ճարտարապետութիւն է մի առաջեալ կրօնի ծնունդ, որոյ ամենից յառաջինը ձևը և կատարելագործութիւնը որոշեալ ազգութեան ճաշակից ու հասկացողութիւնից է կախուած։ Եգիպտացիք, ինչպէս յայտնի է, պաշտում էին զանազան բոյսեր ու կենդանիներ,—նոյնը տեսնում ենք և նոցա ճարտարապետութեան մէջ—նոցա սիւների գլուխները (capitäe) ներկայացնում էին արմաւենեայ պտուղներ, լոթոսի ծաղիկներ (Loth osblüme), եղնաստեղծ գլուխ և այլն։ Ասորիացիք իւրեանց կամարները կանգնում էին գիւցազնական հսկաների մէջքերին։ Պարսկական սիւների գլուխները զարդարւում էին ծունկ չոքած ձիանիրով, առիւծներով և ցուլերով—և վերջապէս, երբ այդ երեք ճարտարապետութիւնները հասան Յունաստան և յունաց ձեռքում իւրեանց վերջին կատարելագործութեան հասան—նոցա ձևերը փոխուեցան, ազնուացան, յունական բնաւորութիւն ստացան։ Եգիպտական սիւների պատկերը ծաղկանց զամբիւղներ դարձան (դորոր-կորնթական), Ասորեստանեայ սիւների խոյաձև գլուխները մշակուեցան և յոնիական սիւներ դարձան, իսկ պարսկական սիւների պատուանդանները հարուստ շքեղ քանդակներ դարձան։ Ինքնին հարկաւոր է ասել՝ թէ ինչու այդ վերոյիշեալ ճարտարապետութիւնները յունաց ձեռքում մշակուեցան, ազնուացան և կատարելագործուեցան, դորա պատճառը ինքն բաւ յոյների յայտնի է։ Յունաց գաղափարը աստուածութեան մասին շքեղ, աւելի կատարելագործական էր, հռովմայեցոց գաղափարը նոյնն էր, ինչպէս և յունացը, նոցա հաւատը, նոցա դիւցազնութիւնը նոյնն էր և հետևաբար ճարտարապետութիւնը ևս նոյնը մնաց անփոփոխ։

Վերոյիշեալ օրինակները բաւական են հին քրիստոնէական ճարտարապետութեանց նմանութիւնը մեկնելու համար։ Կրօնի այդ ազդեցութիւնը կարելի է նաև տեսնել այնպիսի հեռաւոր երկրներում, ինչպէս Եգիպտոսն ու Պարսկաստանն են, որտեղ ծագեցաւ մի նոր շքեղ ճարտարապետութիւն,—այն է իսլամական ճարտարապետութիւնը, և վերջապէս առանց այդպէս հեռու գնալու կարելի է քրիստոնէական ճարտարապետութեան վերայ ևս ցոյց տալ. կարծ՞ է արդեօք մէկը այս տասնևիններորդ դարումս անգամ երևակայել, որ յունաց կամ ռուսաց եկեղեցիները գօթիքական ձևով շինուած լինեն. քանի որ եկեղեցին մէկ էր, քրիստոնէական ճարտարապետութիւնը ևս մէկ էր, բայց եկեղեցիները յետոյ բաժանուեցան արևելեան և արևմտեան, նոյնը պատահեցաւ և նոցա ճարտարապետութեանց հետ։

Առաջին Լէյարդը, որ 1848 թ. ճանապարհորդել էր Հայաստանում

*) Դորա պատճառներից մէկն է, ինչպէս երևում է, այն է՝ որ եւրոպացի ճարտարապետները հայերին վրացոց գրոցի ժողովուրդ ճանաչելով, նոցա ճարտարապետութիւնը ևս ազգական են կարծում։—Ասում են՝ որ Վրաստանի առաջին եկեղեցին Յուստինիանոսն է շինել, ապա ուրեմն և բիւզանդական։

*) Lübeke. Geschichte der Architecture, Leipzig, 1875.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Կ. ՊՕԼԻՍ

24 յունվարի.

(Թղթակցութիւն «Մեղու Հայաստանի» լրագրի)

Հայկական խնդիր. Մեծ լեռ. Ցնծական խնդիր. Զանազան կարծիք թէ հայք ինչ պէտք է ընեն. Ա. Պատրիարք հայր. Ազգին քաղաքական վիճակը. Միացեալ ընկերութիւնք. Նիւթական կամ քաղաքական վիճակ. Թէ ազգը այս պիտոյից առջև կը ցցնէ իր քաղաքական բարձրութիւնը. Պարահանդէսք կ'սկսին. Թէ դալ անգամ կը խօսինք զարձած բանաստեղծութեանց վրայ։

Հայկական խնդիր մը կար երբեմն, ամեն հայ անով կ'զբաղէր՝ կը մտածէր ըսեմ, սուտ չէ, որովհետև երկրիս մէջ ռազմական վիճակը շատ դժուարին եղաւ, մանաւանդ հայուն և տաճկին համար։ Եւ իրօք շատ մարդ այս քաղաքիս մէջ չփոխած ապրելու միջոց չի գտնելուն գլխուն ճարը կը մտածէ։ Կան այնպիսի երիտասարդք որ նամակ մը գրելով իրենց ծնողաց, թէ իրենք քիչ մը ժամանակէ կ'խացնէին ուր կ'լինէին. անհոգ կենալ իրենց համար կը պատւիրեն, և ամիսէ մը կամ երկու ամիսէ Ամերիկայի կամ Ափրիկէի հիւսիսային կողմերէն նամակով կ'իմացնէին, թէ «առ ժամանակեայ ապրուստ մը գտած լինելով աւելի լաւ տեղեկութիւնք իրենց անձանց վրայ քիչ ժամանակէ յայս ունին տալու»։

Մենք՝ այդ քանի մը երիտասարդաց եռանդն չենք կրնար երթալ. այլ կը դառնանք Հայկական խնդրոյն որ կարծես թէ անհետ եղած է, խօսքը չի կայ՝ մոռցուած է. հարևանցի տեսնողն այնպէս կը կարծէ, բայց կը սխալի չարաչար՝ թէ հայ մը որ այդ խնդիրը մոռցած լինի. վասն զի այդ յոյս մի է նաև ապրելու՝ մնանելու համար։ Այս անհարցին քաղաքիս մէջ ուր հայ բազմութիւն մը գիզուած կայ տաճկին՝ յունին՝ հրէային և եւրոպացի խառնաղանճին քով, այս հայ ժողովրդեան յոյսը Հայաստանի բարենորոգմանց խնդրով կը մնայ, բայց կը համբերէ և կ'սպասէ որ կարգը իրեն գայ։ Ո՞րն է այս կարգը, իրաւունքով կը հարցնէ այս տողերը կարդացողը, կարգն այն է որ Պեռլինի Եւրոպական վերջին մասնաժողովը, սուլթանի կառավարութենէն՝ սեւ լեռան, Յունաստանի և ի հայոց բնակեալ գաւառաց բարեկարգութեան խնդրոյ վրայ պահանջմունքներ ըրաւ։ Պօլսեցի հայը սպասեց իր կարգին. տեսաւ որ Մեծ լերան համար եւրոպացի պետութիւնք միաբանեցան ոչ միայն խօսքով և գրով այլ և զինեալ նաւերով. սուլթանի կառավարութիւնը այս վերջին խրատաբանութեան՝ ինչ չափ որ քիչ մը ժամանակ զանգատեցաւ՝ բայց տեղի տուաւ և Ցուլցինիօ բռնած փոքրիկ քաղաքը յանձնեց Մե լերան իշխանին, այդ առաջին խնդիրը որ շատ պզտանալից կերևար և շատ կնճռոտ, քիչ մը ուշ՝ բայց վերջապէս գլուխ լուծուեցաւ։

Հիմա ինչպէս յայտնի է երկրորդ խնդրով այսինքն Յունաստանի սահմանաց խնդրով կ'զբաղին վեց մեծ տէրութիւնք. Եւ թէպէտ մեծ մեծ պատրաստութիւնք կը տեսնուին պատերազմի, և յոյն և տաճիկ շատ աւելի զինուք ահաւոր կը ցցնեն իրենց պատրաստութեանց մէջ, բայց դարձեալ այս խնդիրը այնպէս կարծեն քաղաքագէտք մեծաւ մասամբ, թէ խաղաղութեամբ պիտի վերջանայ, վասն զի Եւրոպայ պատերազմէ չ'ախորժիր և վառօդի հոտը չ'սիրեր կըսուի։

Ուստի հայոց ազգն ալ լռիկ կը նայի՝ կը դիտէ՝ կ'սպասէ որ կարգն իրեն գայ, վասն զի գիտէ թէ Եւրոպայի մեծ տէրութիւնք Պեռլինի 61-րդ յօդուածով և թէ դեսպանաց վերջին մէկ տեղեկագրով Բ. Դրան կ'իմացնէին թէ ոչ մինչև հիմա ըրածները և ոչ իր խոստմանց ծրագիրը (որ Ալեքոյին փաշայի ձեռօք տրուած էր դեսպանաժողովին) գոհ չէր կրցեր ընել զիրենք։

«Դեռ մեծ պետութիւնք յայտնի է թէ խաղալիք չեն, իրենց խօսքը նշանակութիւն մը պիտի ունենայ. հայ ազգը մինչև այսօր գիտէ անծանօթ կ'ապրէր աշխարհիս մէկ ծայրը, Հայաստան անունը ամեն աշխարհագիր տախտակներու վրայ դրուելով ուշադրութեան արժանի չէր եղած քաղաքագիտաց առջև մինչև այսօր, բայց հիմա որ իրենք այդ անունը սորվեցան և խմացան թէ հայ ազգ մը կայ անկարելի է որ իրենց մտաքէն անհետանայ, և իր պահանջմունքը որ ուրիշ բան չէ այլ լաւ և արդար կառավարութիւն, վերջապէս գործադրելի չըլլայ»։

Այս կերպով կը խօսին մէկ մեծ մաս մը, երբ ուրիշներ նաև կան, որ կըսեն թէ. «Եւ մեծ պետութիւնք, դժբաղդաբար, երբեմն կը մոռնան երկայն տարիներով, իրենց դաշնագրաց ստորագրութիւնքը. Փարիզ նաև 1856-ին ընդհանուր քրիստոնէից բարեկարգութեանց համար յօդուած մը կար, և ոչ միայն ի գործ չ'դրուեցաւ, այլ ընդհակառակն ուղղութիւն մի բռնուեցաւ, իբրև թէ ոչնչացնելու համար զքրիստոնեայս և Եւրոպայ չի տեսաւ և քնացաւ մինչև 1877։ Մի՞թէ Եւրոպայ աւելի արթուն պիտի գտնուի այս անգամ, երկբայելի է»։

Բայց խնդիրը երբ լաւ քննուի այն կը տեսնուի որ հայ ազգին ամեն տեսակ թշուառութեանց ամենամեծ պատճառն ոչ այնչափ իր տարած հալածանքներն՝ ոչ ազգասիրութիւնքն՝ թուլ նուաղեն են, այլ իր ազատութիւնն է։ Եւ այս բանիս համար մեծ ջանք մը կայ ինչպէս գիտէք. այդ Միացեալ ընկերութիւնք (հին Արարատեան, Արևել.-Դպրոցասիրաց և Կիլիկեան) հիմա 26, 27 դպրոց ունին ի Հայաստան և Կիլիկիայ և այս դպրոցներն թէպէտ շատ հեռու են ազգին պիտոյքն լեցնելէ, բայց վերջապէս երբ մտածենք թէ ժամանակաւ ամենևին չի կային, և թէ նոցա օրինակը երկրին մէջ գտնուողներուն յորդոր

Հնագիտական նորատիպ հետևանքն է առած Հայկական ճարտարապետութեան մասին *)։ «Ճարտարապետներն և ճանապարհորդները, որոնք հետազօտում են այս երկրի աւերակները ամենաման յատկանիշ արուեստի պատմութեան, որը Նշիրաստի և Խալդեայի աշխարհի փորձութեան ներքոյ իւր անհարաճն կատարելագործութեան է հասել, պէտք է նախ իւրեանց ճանապարհորդութիւնը մինչև Հայաստանի աւերակները տարածեն, որ գլխաւոր ճիւղից հետ լինելու պատճառաւ գեռ բոլորովին չէ քննուած, անանելու։ Համար՝ թէ, ինչպէս այդ ճարտարապետութիւնը, որը սովորաբար բիւզանդական է անուանում, ինչպէս արևմուտքում, նոյնպէս և արևելքում մի և նոյն զարգացման է հասել — և թէ, ինչպէս այդ արուեստը նոյն զարդարանքների (ornament) հետ կապուելով ու պարսկական ճաշակով ներկուելով առանձին ճարտարապետութիւն է կազմել, որը սովորաբար սարակինոսական, արաբական կամ մաւրական է անուանում։ Խաչակիր պատերազմներից յետոյ — շարունակում է Լէյարդը — Եւրոպացիք վերադարձան հայրենիք տանելով իւրեանց հետ Ասիայից նորա շքեղ ճարտարապետութիւնը ու զարդարանքները (ornament), որոնք արաբների բոլոր տիրապետած երկիրներում արդէն ընդունուած էին։ Արաբները իբրև մի վայրենի, անկիրթ ժողովուրդ իւրեանց ճարտարապետական առաջին հաւատացողութիւնը առացել էն — ինչպէս երևում է — պարսկական դասատները տիրապետելուց, յետոյ այդ ճարտարապետութիւնը անցաւ Եւրոպայ — սակայն շատ կարելի է, որ այդպիսի մի գլխաւոր արդէն փոքրից Հայաստանում պատահել էր՝ ընդհանրապէս հին քրիստոնէական և պարսկական ճարտարապետութեանց նմանութիւնից յառաջացել է մի գեռ շատ անծանօթ և չքննուած արհեստ, որը սակայն գեղեցկութեան ու փառաւորութեան զարմանալի դաշնակցութիւն է ցոյց տալիս։ Այդ արևմտեան ու արևելեան արուեստների նմանութիւնը պտղաբերած է աւելի ծանրագոյն քննութեան»։ Առհասարակ Լէյարդի նկարագրութիւնից կարելի է նկատել, որ նա պատրաստ է այդ ճարտարապետութիւնը ոչ միայն մի անկախ արուեստ համարել այլ մինչև անգամ գոթիքական ու թամթարների ճարտարապետութեանց մայրը *), եթէ մի քիչ կասկածանօք է վերաբերվում դէպի այդ ճանապարհորդութիւնը, պատճառն այն է, որ նա շատ անցում հինգում է, Տեքսիէի գրքի վերայ **)։ Այդ վերջինը ցոյց է տալիս մի քանի Հայոց եկեղեցիների ձևեր անուանելով՝ որոնց մէջ փոխանցումն բիւզանդականից դէպի գոթիքական ճարտարապետութիւնը, բայց այդ աւելի ևս անկարելի է. գոթիքական ճարտարապետութիւնը յառաջացել է 1161 թուից յետոյ, — այդ բոլորը կարող էր վերաբերուել Անոյ եկեղեցիներին, եթէ նորա ձևը Լէյարդին հետ ազգակցութիւն չունենար։ Այդքան ապացոյցը շատ բաւական է Հայկական ճարտարապետութիւնը անկախ ճանաչելու համար, թէպէտ կրկնում եմ գեռ շատ քննելու, զննելու նիւթեր կան մեր հայրենիքում։

Առայժմ այսքանը բաւական է, աւելի յարմար ժամանակ աւելի մանրամասն կխօսենք այդ բաւականին հետաքրքիր նիւթի մասին։

Վ. Սուրէնեանց

*) Layard. Niniveh and Babylon with description of his travels in Armenia e. c. t. London 1856.

*) Զկամենալով յօդուածը չափազանց մանրագիտական ձև տալու չեմ բերում գոցա օրինակները, որոնք պարզ կերպիւ ապացուցանում են մանաւանդ վերջինի ծագումը։

**) Texcier. Description de l'Armenie et de la Perse Paris 1852.

ԱԶԳԱՅԻՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՕԼ

22 դեկտեմբերի.

(Թղթակցութիւն «Մեղու Հայաստանի» լրագրի)

Մեծապատիւ խմբագիր։ Վերջին ժամանակներումս կրօնական ազատութեան գաղափարը պաշտպանելու համար, «Մշակի» մէջ երևեցաւ աղէկատւողութեանց քաջ յայանի Ամի. Գարաամեանցը։ Մենք չկամենալով մանաւանդ «Մշակ—Մեղուական» պանակուին, աւելորդ չհամարեցինք մի քանի խօսք ուղղել դէպի իրեն Արմ. բաս Գարաամեանցը։

Դեռ 1879՝ թուին, երբ Ալեքսանդրապոլից Անի գաղթել ցանկացող 37 գերդաստաններից բաղկացած ընկերութիւնը որոշեց այդ գործը գլուխ բերելու համար մեզ, երկուսիս, Կարս աշխատելու երթալ, այդ պարոնն էլ մի քանի ուրիշ անձանց յատուկ խնդրանօք և միջնորդութեամբը ընդունուեցաւ, միայն իւր սեպհական ծախքովը մեզ հետ մասնակցելու *)։ Հանգամանքների բերմամբ պարոնը օգտուեցաւ ընկերութեան դրամով...։

Կարսից վերադառնալով մեր ծախքը 60 րուբլի հասած էր, որից 20 մեզ վճարելու յիշեալ պարոնը, առաջնորդեցնելով դորա նաև իւր, իբրև անգամի, ապառիկ մնացած 2 ր. 50 կոպ., նորա բոլոր վճարելիք գումարը հասնում էր 22 ր. 50 կոպէկի։ Գաղթող 37 գերդաստանները տաւկուէն այդ գումարը ստանալու բաղդը չունենալով՝ դիմում են նորան վերջին անգամ հրապարակապէս, որ իւր «ազնուութիւնը» վերականգնելու համար, թող բարեհաճի կամ ընկերութեան ղեկավարներին՝ կամ «Մեղու» խմբագրութեանը նոյն գումարը առաքել՝ գաղթականների ամբարը համալրելու համար։

Կրկնելով մեր նամակը կամենում ենք ալ Գարաամեանցին նաև մի համեստ խորհուրդ տալ, այն է՝ փոխանակ իւր գիտութիւնից մխիթարւոր փաստեր հաւատութիւն ունեցող մեծ հարցի մէջ խառնելու՝ փոխանակ ոչնչիւնական բարձրութիւնից չանեթեր արձակելու՝ և ներկայի «բոթ ու փփիրի» նման ծնելու, թող բարեհաճի իւր հօր բաղդակցի գաւթարները գրելով և արշին չափելով զբաղեցնել, դորա կարող են նորա համար հաց մատակարարել...

Գաղթող ընկերութեան կողմից՝

Կար. Յովհաննէսեանց.

Կար. Խաչատրեանց.

*) Ծանօթ. Նորա գալուստը բոլորովին աւելորդ էր, և նա, պէտք է ասել, որ աշխատում էր ոչ թէ գաղթականութեան՝ այլ իւր համար գլուխպրութեան պաշտօն գտնելու։

Յօդ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՊԱՇՏՕՆԵԱՅԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ ՅՈՒՆԱԿԱՆ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

Փետրվարի 3-ին պատգամաւորների ժողովում Գրուսար բացատրութիւն խնդրեց արևելեան խնդրի մէջ բռնած Ֆրանսիական քաղաքականութեան մասին, որին պատասխանեց արտաքին գործոց պաշտօնեայ Բարտելեմի-Սէնտ-Իլէրը հետևեալը։ —«Յունաստանը խօսում է համաձայն կոնգրեսի և կոնֆերենցի վճիռների։ Զննելով իւր բոլոր համակրութեամբ դէպի Յունաստանը, նա պէտք է որ ասէ, թէ Յունաստանը անիրաւացի է։ Ոչ Ֆրանսիան, ոչ էլ Անգլիան, ինչպէս ասում են, չեն խառնուել Յունական խնդրի մէջ։ Երբ Ֆրանսիան և Անգլիան Յունական խնդրի մէջ մտան, այն ժամանակ խնդիրը Բեռլինում բնաւ իսկ այն ազդեցութեան վճռականն էր վերաբերում. Կոնֆերենցիայի միակ նպատակն՝ միջնորդութիւն անելն էր։ Փաստաթղթերը համաձայնութեան իրանց մէջ, որ Թիւրքիային և Յունաստանին խորհուրդ կ'տան ընդունելու կոնֆերենցիայում որոշած սահմանները։ Հետաքրքր պետութիւնները իրենց հաւաքական նոտի մէջ կարող էին Թիւրքիային հրաւիրել կամաւոր գիջումներ անելու։ Իւր հետագիծների մէջ նախկին պաշտօնեայ Ֆրէյսինէն հրամայում էր միշտ ամեն սեղան առերդալին միջոցներից կոնֆերենցիայի վճիռները կատարել տալու համար։ Բերտելեմի-Սէնտ-Իլէրն էլ աշխատել է իւր նախորդի քաղաքականութիւնը շարունակելու։ Եւ բացառ ոչինչ իրաւունք չունէր Յունաստանին յանձնելու Եպիրոսը և Թեսալիան, որոնք մինչև անգամ յունաց զօրքերով գրաւած չեն եղել, և որովհետև այդ գաւառները իրապէս պատկանում են Թիւրքիային։ Ուրիշ բան է Մօնտենեգրոյի (Ղարադաղի) վերաբերեալ գործը։ Այստեղ միայն Մօնտենեգրօն պատերազմի մէջ գրաւած գաւառի փոխարէնը ուրիշը ստացաւ։ Յունաստանը չի կարող յաղթողի իրաւանց վերայ հիմնել իւր պահանջը։ Ինչ վերաբերում է ծովային ցոյցին, այդ միայն բարոյական ճնշումի բնաւորութիւն ունէր։ Ֆրանսիան պէտք է մասնակցէր այդ ցոյցին, որ չը հեռանայ եւրոպական համաձայնութիւնից։ Իրաւարարական առանձին առաջարկութիւնը ոչինչով չխանգարեց եւրոպական համաձայնութիւնը։ Եւրոպայի խաղաղութեան համար ամենևին ցանկալի չէ, որ Յունաստանը, Եւրոպայի աւագ խորհուրդների հակառակ, պատերազմի պատրաստուէր։ Դորանումն է հենց կայանում խաղաղութեան պահպանութեան փառքը։ Այդ փառքը հեռացնելու համար, Ֆրանսիական կառավարութիւնը առաջարկեց իրաւարարական ատեան, ի հարկէ այն պայմանով, եթէ այդ գործի մէջ շահ ունեցող երկու կողմն էլ յանձնեն իւրեանց համաձայնութիւնը։ Պետութիւնների որոշումը պիտի ունենար զատաւճռի նշանա-

---

մի է, յառաջադիմութեան և բարեկարգութեան և թէ այդ պաշտօնատար անձանց կարևորութիւնը պէտքը ամբողջ Հայաստանին, մեծ մխիթարութիւն մի կայ։ Աւելի մեծ մխիթարութիւն մի եւս կայ և այն է, որ այս ընկերութիւնը կազմող երիտասարդք, հաւատարմութեան անձնանուիրութեան և ծախող խնայութեան զարմանալի օրինակ մը կլինին համարուիլ, մանաւանդ երբ խորհրդածենք թէ սոյն հայերը իրր եկեղեցի՝ հիւանդանոց՝ դպրոց կը կառուցանեն երկրին, իրրև ազգային եկամուտք հաստատութեան և յափշտակող ժամանակներ ցոյց կը տրուէին, և այս բարոյականի մասին բարի վկայութիւն մը կլինայ համարուիլ ազգին համար, և վստահութեան առիթ թէ իւր սեռած արծաթը ամենևին՝ կորուստ չէ կարելի համարել։

Այս ընկերութեան ատեր նոյնատիպ որբոցան պատրիարք հայրը յաւ հանչելով, գեռ անցեալներս նոր կանոնադրութիւն մը կը յարդարել ժողովուրդը օգնելու այս ընկերութեան, որ միակ յոյսն է ապագային։ Զինեմ թէ կան մարդիկ որ այսպիսի ապագայի փայլը յայտնելով չեն կրնար շառատոց, այլ փայլուն՝ փառաւոր՝ այժմ չլայնող բաներ կը պահանջեն, մեծամեծ տաճարներ, համալսարանական վարժապետներ, արհեստական վարժարաններ, և գեռ ուրիշ շատ մը բաներ որոց անունը տալ աւելորդ կը համարիմ, ոչ եթէ այդ բաները եթէ կարելի լինէին իմ ափսոսելի չէին լինիր, այլ անոր համար որ այդպիսի պէտքերուն գեռ իբրև երազ կերևան ազգին այս ապագայ վիճակին համար, քանի որ մեր հարուստները շատ անտարբեր են ազգային յառաջադիմութեան։

Մխիթարութիւն էր մեզի լսել երբեմն, որ առատատեսնցի հայ մը սպասն ազգին ստրուկութեան վկայ են իր գործերը, և որ լաւ համարուեր է թէ տասանները կրնայ գիտել և վերականգնել հայ ազգը, մինչ անոր մեծ առաքինութեան մը կամ աւելի արդ բնկալ վարժապետանոց մը հաստատել ի Կղզին, բայց քանի մը տարիներ եղան և այս յոյսը գեռ իրականանալու չինուցանուը։

Իրաւ ազգի մը կենաց համար քանի մը տարիներ մեծ բան չեն համարուիր, բայց ժամանակը այնպիսի սախրզատեսութիւն ունի ազգին համար և այնպիսի պահանջմունք որ կարելի չէ օրինակ չի համեմատ։ Մանաւանդ երբ մտածել, որ բարի օրինակ բարի նախանձ կրնայ շարժել, և ուրիշ հարուստներ նաև կրնան երևել որ նմանօրինակ կրթութեան գործելու. Վասն զի Հայաստան պէտք ունի լուսաւորութեան, և շատ պէտք ունի. այդ հայրենի երկրին զարգացման դարհեստորդներ տեսանք որ երբ մեզ կը նկատուէին նիւթական թշուառութեան համար բարոյական խեղճութիւնը, այն ատեն կ'խնամուէինք թէ փայր ատաքան... նի օգնութիւնք նաև մեծ էին։ Ոչ դասեր մտադրին և ոչ ուրիշ համբոյններ, պէտք չէ կարծեն թէ անկեալ Հայաստան ոչինչ գանգատելով կրնայ յառնել. պէտք է գործութիւններ ընել, և երևել Եւրոպայի քննող աչքերուն այնպէս ինչպէս որ արժան է։

Ամեներեւկան կառավարութիւնք կրթական վիճակագրութիւնները խորամանկել ինչպէս զինեք, հարկերին 17 ցցնել հայ ժողովուրդը քաղցին և մերկին հետ բաղդատմամբ, բայց բարոյական մարդը չի կրնար առեղծել, վասն զի ինք այդ կառավարութիւնք բարոյական մարդու արժէքը չի համարեր, իր հօձանները չատ տարօրինակ են նաև մեր ազգակից վարժապետներն իբրև ազգութեամբ և կրօնամոլութեամբ։ Ռուսի երկ բարոյապէս արդէն հայ ժողովուրդը բարձր է բաղդատմամբ մարդկին և քրդերին հետ, եթէ քիչ մը լըրջօրար ջան ի գործ դրուի, ազատուել է փրկութեան գործը։

Այդ Միացեալ ընկերութեան, որ Հայաստանի կրթութեան գործը ձեռնարկած է, յայտնի է թէ սոյնու պատճառաւ, իւր եկամուտներուն նուազը անկանելով կը ջանայ ծ և իսկ կերպով իւր 27 դպրոցներուն պէտքերը հոգալ և այս բանին համար դարձեալ իւր արտաքոյ կարգի միջոց ձեռք կ'առնու. ինչպէս անցեալ տարիներ պարտահանդէս մը տալ։

Եւ այս բանին համար Ֆրանսիս գետութիւն մը Բ՛զեոյի հանրագրութիւնն խնդրեր էր, և նա շատ մարդասիրութեամբ ընդունած էր Միացեալ ընկերութեան նուիրատուքը, երբ պատգամաւորութիւն մը դիւայ էին շնորհակալութեան ուղիղելով իրեն ներկայանալու։ Գ. Բիզոյ ուշադրութեամբ մտիկ ընելէն վերջը պատգամաւորներուն խօսքերը, պատասխանեց թէ ինք շատ գոհ էր որ հայոց ամուսնական երախտապարտութիւնը Ֆրանսիս գետութեան հայեր ութեան կը ընդունեն, թէ ինք կը ձանչէր այդ ազգին գրականութիւնը և պատմութիւնը, և թէ շատ ուրախ էր որ այդ ազգը գիտութեան լոյսը կը ջանար տարածել հայրենի երկրին մէջ, որուն համար աւելի լաւ ապագայ մը կը հասատայն միշտ, և որուն համար ինք և ուրիշն ամեն ջանք և ամեն աշխատութիւն չէին խնայած, թէև իրենց յաջողիր բառ իրենց փափագանաց յաջողութիւն գտած չէին։

Բայց ինք լաւ համոզուած էր թէ հայոց ուսումնասէր և խաղաղ ընթացքը հետ խաւարապար և փառաւոր ազգութեան, վերջապէս պիտի յաջողէր բարելաւելու համար ազգին վիճակը։

Հիմայ ընկերութիւնը կը ջանայ որ պարտահանդէսը օգտակար և արգասաւոր լինի Հայաստանի դպրոցներուն համար. և միւս կողմանէ կը ջանայ Պոլսոյ զանազան թաղերուն մէջ իւր բաժանորդաց թիւը շատցնել։ Մենք իրեն բարձր նպատակին բարի յաջողութիւն կը մաղթենք։

Մանաւանդ Պոլսոյ և կրնամք ըսել ընդհանուր Յածկաստանի այս վիճակին մէջ, ուր դրամական նեղութիւնը իւր վերջին սահմանները հասած է։ Տէրութիւնը պատերազմի պատրաստութեամբ զբաղեալ ըլլալով յանկայ, ծառայում-

կութիւն: Իրաւարարական ատեանի առաջարկութիւնը մերժեց Թիւրքիան, և որովհետև Եւրոպական համաձայնութիւնը շարունակվում էր, հարկաւոր էր որոնել ուրիշ միջոցներ Թիւրքիայի և Յունաստանի մէջ պատերազմի առաջքն առնելու համար: Ֆրանսիական կառավարութիւնը հետևում է անդադար խաղաղ քաղաքականութեանը, բայց խաղաղութիւնը պէտք է որ արժանի լինի Ֆրանսիական ազգին, որովհետև Ֆրանսիան ամենևին չէ կամենում խաղաղութիւն ունենալ անպատճառ ամեն տեսակ զոհողութիւն անելով: Յունաստանը չկամեցաւ լսել Ֆրանսիայի խորհուրդները (շարժումն ժողովի աջ կողմը)»:

Կասանեակը ընդմիջելով Բարտելեմի-Սենտ-Իլերին, ասում է. «Ես կարծում եմ, որ Ֆրանսիական կառավարութիւնը Յունաստանին պատերազմի մղեց»: (Կասանեակին հրաւիրում են կարգի): Արտաքին գործոց պաշտօնեան շարունակում է.— «Ֆրանսիան և Եւրոպան չեն կամենում արևելքում նեխման ծրնչում [?] անելու, նոքա միշտ այդ յայտարարել են: Ֆրանսիան երբեք չէ ձեռնարկել արկածախնդրական քաղաքականութեան: Զննելով իմ բոլոր համակրանքս դէպի Յունաստան, այնուամենայնիւ ես պէտք է ուղիղ յայտնեմ, որ Ֆրանսիան աւելի եմ սիրում (հաւանութիւն): Ամենից լաւը, ինչ որ կարող էր Յունաստանը անել, այդ Եւրոպայի բարեկամութեան գնելն է: Թիւրքիան համաձայն է զիջումներ անելու և Յունաստանը կ'ստանայ մի մեծ նահանգ առանց մի կաթիլ արիւն թափելու: Եթէ Յունաստանը զէնք բարձրացնի, նա կ'ենթարկուի անխուսափելի աղէտքի: Երբ սկսուեցաւ Բոսնիայի ապստամբութիւնը, Եւրոպան նորա վերայ նայեց թեթև աչքով: Հիմայ յայտնի է թէ, ինչ հետևանքներ ունեցաւ նա: Չ'պէտք է մոռանալ այդ դասը: Եթէ Յունաստանում հրդեհ ընկնի, դա տարածվելի կերպով կը տարածուի միւս երկրներում: Պէտք է յուսալ, որ այդպիսի տխուր հետևանքներ չեն առաջանալ և Յունաստանի ծանր դրութիւնը կ'լուծուի խաղաղ ճանապարհով, եթէ միայն Յունաստանը խոհեմ գտնուի»:

Այս բացատրութիւնից վերջը պատգամաւորների ժողովը ընդունեց սրա խնդրին անցնելու այս առաջարկութեան ձևը: «Ժողովը յայտնելով իւր գոհութիւնը պաշտօնեայի բացատրութեան և կառավարութիւնից ընդունած խաղաղական քաղաքականութեան մասին, անցնում է հերթական գործերին»: Արտաքին գործոց պաշտօնեան համաձայն էր այս ձևին:

«Standard» Լոնդոնի լրագրին հեռագրում են Բերլինից փետրվարի 1-ին: Եթէ կ'շարունակվի լինելու բանակցութիւնը մեծ պետութիւնների անտարբերութիւնը Պոլսում կ'մնայ միայն ձևի համար: Բաղդաւորապէս այն ամեն պատերազմական յայտարարութիւնները, որ հեռագիրը մեզ հաղորդում է Աթէնքից շաբաթը մէկ կամ երկու անգամ, ոչինչ հաստատ հիմք չունին: Ընդհակառակն, ցամաքի բոլոր մայրաքաղաքներում տիրում է այն համոզմունքը, որ եթէ Թիւրքիան և Յունաստանը մնան միևնոյն առանց միջամտութեան, կամ նոքա հաշտութեան դաշինք կ'կապեն, կամ թէ կը պատերազմեն միմեանց հետ կէս-պաշտօնական խմբերի միջոցով: Բայց եթէ իսկապէս պատերազմ ծագի, այն ժամանակ Թիւրք-յունական պատերազմը կը բորբոքի օսմանեան կայսրութեան մէջ անխուսափելի ցեղերի և նոցա օտար երկրացի պաշտպանների խառնվելովը:

**

Փետրվարի 2-ից, հաղորդում են Լոնդոնից. Արդեն քանի օր է, որ պօլիցիան պահպանում է Գլադստոնի կացարանը ֆենիների յարձակումից: Այսօր Գլադստոնը գնաց պարլամէնտ պօլիցիական ագենտների ուղեկցութեամբ:

**

Լոնդոնից հեռագրում են փետրվարի 6-ից «Հաւասի գործակալութեան»: Կ. Պոլսից հաղորդում են, թէ գերմանական դեսպանատան առաջին քարտուղարը իբրև առացել է պաշտօնական տեղեկութիւն, որ գրաֆ Հացֆէլդը իւր ժամանակաւոր հրաժեշտը երկարացնելու առիթով կ'գայ Կ. Պոլիս միայն մարտի վերջումը: Քարտուղարը կ'փոխարինէ գրաֆ Հացֆէլդին յունական խնդրի մասին սկզբնական բանակցութեանց մէջ:

**

Բերլինի «Norddeutsche Allgemeine Zeitung» լրագիրը փետրվարի 6-ից տալիս է մի յայտարարութիւն յունական դեսպանի կողմից Բերլինում այն մասին, որ յունական զօրաց շարքերը մտնելու խնդիրքը չեն կարող ընդունուել, որովհետև երկրի սահմանադրական օրէնքները արգելում են օտարազգաց յունական զօրագունդը մտնելու:

«ՄԵՂՈՒԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ).

ԿԻԵՎ, 4-ին փետրվարի: Երեկ նահանգական ատեանում վերջացաւ կալուածատէր Պոգգօրսկու 300,000 ռուբլու վեքսիլները նենգող հրէաների գործը: Գործը տևեց չորս օր, բոլոր վեց դատապարտեալներին էլ երդուեալները յանցաւոր համարեցին. երկուսին գիջողութիւն եղաւ:

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲԻՐԺԱ.

5-ին փետրվարի.

Արք. բանկ.	1-ին	95 75
— —	2-րդ	93 25
— —	3-րդ	93 50
— —	4-րդ	93 37
Վիճակահ.	1-ին	223 —
— —	2-րդ	222 —
Արև. փոխառ.	1-ին . .	92 50
» »	2-րդ . .	92 37
» »	3-րդ . .	92 75
Լոնդոն	. . . . .	25 28
Համբուրգ	. . . .	215 —
Փարիզ	. . . . . .	266 50
Ոսկի	. . . .	7 ռ. 76 կ.
Անգլիական բանկի դիսկօնտ		— 3.

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

ՆՈՐ—ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են. Այժմ Նոր-Նախիջևանը ունի տխրահռչակ [?] հաստատուած «Թատերասիրաց ընկերութիւն»: Այդ ընկերութեան անդամների թիւը օրէ օր աւելանում է: Մեր կարծիքով մինչև որ ընկերութիւնը չվարձէ 2—3 դերասաններ և դերասանուհիներ թատերական գործը յաջողակ չի լինիլ և հաստատութիւն չի ունենալ: Այժմ պ. Սաֆրազեանը մեր մօտ է. ասում են թէ մինչև ապուհացք [?] պիտի մնա. իսկ յետոյ... մեր կարծիքով, անպատճառ պէտք է նոքա վարձեն միայն պ. Սաֆրազեանին, երկրորդ հրաւիրել մի ուրիշ դերասան ևս, և երրորդ՝ հնար գտնել հրաւիրելու մի դերասանուհի: Իսկ վարձը, կը հարցնեն մեզ, վարձը, պարոններ, պէտք է իրանց գրպանից տան նոքա (ամսական 3—3 կամ 5—5 մանէթն մեծ բան չէ), որոնք նախանձայոյզ են քաղաքիս բարոյական զարգացման: Ամեն մի օրինաւոր նախիջևանցի յընթացս ձմեռվայ սէզօնին, ամեն օր թղթախաղի համար պատրաստ է գրպանէն 5, 10, 15, 25, մինչև անգամ 200 ռուբլի մսխել . . . Պարոն նախիջևանցիներ, դադարեցէք ունայն բաներու համար «սատկ փոթելը» և հաւատացնում ենք ձեզ, որ ծանրակշիռ ազգային գործերու համար միշտ գրպաներուդ մէջ ապատ փող կը գտնուի:—Պահեցէք պ. Սաֆրազեանին:

**

Նոյն տեղից մեզ գրում են. Արուեստական դպրոցը սպասածներէս աւելի յառաջադիմութիւն է ցոյց տալիս: հազիւ 2 ամսուայ բացուած է, բայց աշակերտաց մէջ մօտ տասը տղայ արդէն այնքան սիրուն կօշիկներ են կարում, որ տեսնողը կարող է կարծել թէ՝ բաւական հմուտ վարժապետի ձեռագործ են նոքա: Միւսները այնպիսի մանր մունր փայտէ ու տախտակէ կարասիք են շինում, որ այցելուի մինչև անգամ չուզեն հաւատալու, որ այդ նուրբ և գեղեցիկ իրեղէնքը շինուած 11 կամ 12 տարեկան տղայոց և կարճատև միջոցի մէջ սովորած: Աւարկաների ուսումնասիրութիւնն ևս շատ լաւ է: Աշակերտների թիւը մօտ 60 է. եթէ տեղը ներէր՝ այս տարի և եթ երկու հարիւրէն աւելի կ'լինէր. մարդ ակամայ ասում է «չէին կենան արուեստական դըպրոցի հոգաբարձուները:»

**

Նոյն տեղից մեզ գրում են.

Նոր Նախիջևանի մէջ գտնուող, երբեմն վեհազնեայ Լազարեանց ճեմարանումը սովորող աշակերտները, նոր տարուայ օրը ուղարկեցին կոմս Լօրիս—Մելիքեանին յետագայ հեռագիրը.

«Լազարեանց ճեմարանի մէջ մնած աշակերտներն խմում են իրանց փառաւոր ընկերակցի, խաղաղութեան և պատերազմի դիւցազին՝ կոմս Միքայէլ Տարիէլեան Լօրիս—Միքայէլեանի կենացը. Ստորագրողք՝ Քօթէլնիքեան, Մօլչանով, Ռ. Պատկանեան, Մ. և Կ. Խալիպեանք, Յ. Իվանով, Յ. Բերբերեան, Ա. Տէր Գրիգորեան:

Եւ իսկոյն պ. Քօթէլնիքեանը ստացաւ յետագայ պատասխանը.

«Բարեհաճեցէք հեռագրի ստորագրողներին յայտնել իմ անկեղծ երախտագիտութիւնը այն մտադրութեան համար, որ նոքա ինձ ցոյց տուին»:

Կոմս Լօրիս—Մելիքեան:

**

Պ. Գ. Շ. ՆՈՐ—ԲԱՅԱԶԵՏԻՑ գրում է, որ «Մշակի» մէջ հրատարակած լուրերն այնտեղից լաւ տպաւորութիւն չէ գործած հասարակութեան վերայ: Նոր Բայազէտի երկսեռ դպրոցները մեծ յառաջադիմութիւն են անում բարեգործական ընկերութեան հովանեաց ներքոյ: Արական դպրոցում, որ երեք դասատուն ունի, վեց բաժանմունքով 160 աշակերտ կայ, իսկ օրիորդականում 60 աւելի աշակերտուհիք:

**

Նոյն տեղից հաղորդում են, որ այնտեղ եղանակը գարնանային է, որ ոմանք բարեգուշակ և այլք չարագուշակ են համարում:

**

Նոյն տեղից գրում են, որ անցեալ դեկտեմբերին երկու սպանութիւնք են եղած, մէկը քաղաքի հրապարակում և միւսը Գեղամայ ծովի ափին, ուր գըտնվել է մի գլուխ, որոյ երեսի կաշին քերթած է լինում. հետաքննութիւնը լինում է:

Խմբագիր Գ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ.

Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ.

նէր կը հրատարակէ և իւր պաշտօնատարք համբերութեան կը յորդորէ, իմացնելով թէ քիչ մը ժամանակ ուշիկ առնլէ յոյսերնին պէտք է կորեն: Արդէն այս խեղճերը համբերութիւն սովրած են ակամայ, վասն զի շատերը տարուան մը միջոցի մէջ հազիւ երեք ամսական առած են, և մնացածին փոխարէն թուղթ մը միայն ընդունած են, որ հրապարակի վրայ հարիւրին 30 կամ շատ շատ 40 արժէք ունի: Եւ այսպէս գրեթէ բոլոր արհեստաւորաց աւետոէրը [?] նուազեալ է, տուրքերը օր աւուր աւելի ծանրանալով ժողովրդեան վրայ, գանձը միշտ պարապ է, և տէրութիւնը իւր եկամուտները զանազան փոխառութեանց յատկացնելով ստակներուն և իւր ծախուց վճարման չի կրնար հասնել: Թէպէտ իւր կէս պաշտօնական օրագիրք կը յոխորտան և կը յորդորեն ժամ առաջ արշաւել Յունաստան 100 հազար զօրօք և առաժօր կոխել այդ փոքրիկ պետութիւնը որ կը յանդգնի պատերազմի պատրաստութեամբ սպառնալ Եպիրոս և Թեսալիա բռն որոշման Պեռլինու վեհաժողովին. դժբաղդութիւնը նոն է բառ ասնոց [?], որ ոչ միայն 30 հազար պատրաստ զօրք չի կայ այդ դաշտաց մէջ ինչպէս իրենք կուզեն հաւատացնել, այլ և ոչ 12 հազար հոգւոյ բանակ մը կը գտնուի, թէպէտ աշխարհ գիտէ թէ Յաճկաստան առանց դրամի գնոց պատերազմել:

Այս բաժններնէս յայտնի է թէ Թիւրքայ կառավարութիւնը չ'ուզեր և ոչ մի բարելաւութիւն գործել ՚ի Հայաստան, ինչպէս ուրիշ իւր ընդարձակ պետութեան բոլոր նահանգաց մէջ: Եւ թէպէտ այս վիճակը եթէ շարունակուի կործանում կ'սպառնայ երկիրը անդադառ [?] զաւանալով: Բայց զարմանալի կուրութիւն մի կայ կառավարչաց, որ չեն ուզեր տեսնել, և հաւանական թէ կը ծածկեն վիճակը սուլթանէն: Հաստատ բնակութիւն ունեցող քուրդերը նաև հարստահարութեանց դէմ բողոք կը բառնան ամեն օր, և հաւատարմութեան արժանի ճանապարհորդք կը վկայեն թէ աստից քանի տարի առաջ չորս հինգ հարիւր տունէ բաղկացեալ քուրդի գիւղօրայք այսօր հազիւ թէ քառորդ մաս մը կը ներկայեն: Եւ կուսակալք, որ Թուրք օրագրաց մէջ հեռագիրներ կը հրատարակեն թէ երկրին մէջ խաղաղութիւն և հանգստութիւն կը տիրէ, նոյն ճանապարհորդաց խոստովանած են, թէ բաւական ատրկան [?] չունենալով երկրին մէջ բարեկարգութիւն պահելու՝ աւազակութիւնը սանձահարելու միջոցներէն զուրկ էին:

Կառավարութեան երկու օրագիրք «Վակըթ» և «Թերճիմանի Հաքիքաթ» գրեթէ ամեն օր յօդուածներ կը գրեն հայկական խնդրոյն դէմ, երբեմն շատ սաստիկ, երբեմն քիչ մը աւելի կակուղ ոճով և յաղթանակով ցոյց կուտան իրենց փաշաներուն հեռագրութիւնքը: Դեռ ամիս մը չի կայ որ գրեցինք ձիվասա [?] պէյի ստորագրութեամբ երկայն յօդուած մը հրատարակեր էին Ալաշկերտի և Պայազիտի գաւառը օրինակ բերելով, ուր հազիւ թէ հայոց քանի մը գիւղ գտնուելուն Հայաստան չ'ըմալուն [?] փաստ կը ցցնէին: Բայց նոքա որ նոյնպէս այն գաւառներէն անցեր են կը վկայեն թէ երեք չորս օր ճանապարհորդելով Պայազիտէ ՚ի Վան մինչև Բերկրի 60 քրդի վրան հազիւ տեսեր էին և երկու երեք արտերու մշակութիւն: Ի'նչ պարծանքի նիւթ կառավարութեան մը պաշտօնատէրի համար անապատներով պարծենալ, և կարծել թէ անապատը Հայաստան անունը կը սրբագրէ աշխարհագրական տախտակաց վրայէն:

Պօլսոյ հայ երիտասարդութիւնը Միացեալ ընկերութեամբ կ'աշխատի, ուսմնոց [?] յանձնաժողովը կ'աշխատի, հայ տիկնայք և օրիորդք՝ Ազգանուէր Հայուհեաց և Դպրոցասէր Հայուհեաց ընկերութեամբ կ'աշխատեն և ամենքը Հայաստանի համար կ'աշխատեն. Լ. երբ խորհրդածէ ոք, որ չափաւոր վիճակի և ազնիւ ընտանեաց վերաբերեալ անձինք հայրենի երկրին համար մուրացկանութիւն ընելէ չեն խորշեր, խռաւմը [?] կը զարմանայ: Եւ այս եռանդը ընդհանուր է, վասն զի ամեն ոք կը յուսայ թէ բարենորոգմունք պիտի հասնին: Խեղճ հայաստանցին նաև կը յուսայ, և իր պանդուխտ զաւակներուն մէջ կան այնպիսիք որ բոլոր շաբաթը հող և կիր և քար կրելէ վերջը, հանգստեան կիրակի օրն ալ կերթան Գալաթիոյ Լուսաւորչեան վարժարանը, կարդալ՝ գրել՝ հաշուել՝ ազգային պատմութիւն և աշխարհագրութեան դաս առնելու:

Քանի տարի է և աւելի որ այդ վարժարանի մէջ առաջ ծեր մը Գալաթիայեան [?] Քրիստոսատուր անխոնջ կ'աշխատի, հաւանական է թէ այսչափ տարիներու մէջ կիրակի օր մը պակսած չէ այդ դասախօսութենէն: Գիտեմ թէ կան իր վրայ ծանր ամբաստանութիւնք, և լրագիրք երբ Գալաթիոյ Ծախի [?] անկյանութիւնքը պատմած են անունով կամ անանուն զինք յիշած են իբրև և նոյն Ծախին գլխաւորաց մին, բայց իր այս աշխատութեան մէջ յարատևութիւնը ինձ համար այնչափ արժէք ունի, որ կը կարծեմ թէ ամեն մուրէ և մուրէ կը լուանայ զինք և կը մաքրէ:

Իմ գրութիւնս կարծածէս աւելի երկայն եղաւ, ուստի գալ անգամուն կը թողում ասոնց փոքրիկ բանաստեղծութեանց և դաւերուն վրայ խօսիլ որ կը ջանան սրբազան Պատրիարք հօր ամեն հիմունքը փորել, և պատրիարքարանի կառավարութեան դէմ կը յարձակին տըգար կամ անիրաւ:

Սօսի-Ն.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Դուրս եկաւ մամուլի տակից «ԾՐԱԳԻՐ ԵՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՂԻՒՍԱԿ ընդհանուր և ազգային պատմութեան»: Այս մի օժանդակիչ ձեռնարկ է ուսուցիչներին դասաւանդութեան համար և աշակերտներին կրկնութեան համար: Ծախւում է Տփխիսում Ենոքեանի և Զաքարեան Գրիգորեանցի կամսարական գրավաճառանոցներում: գինն է 40 կոպ. գումարով առնողներին զեղչում կլինի: Ցանկացողները կարող են գրել և երեւան ուղղակի աշխատասիրողներին այս հասցէով. Эривань. Симеонянцу или Мельянцу. Въ женское училище св Гаянэ.

4—10

Արդէն բաւական ունիմ ժողոված և դարձեալ ժողովում եմ՝ ՀԷՔԻԱԹՆԵՐ, ԱՌԱԾՆԵՐ, ԱՆԷԾՔՆԵՐ, ՕՐՀՆԱՆՔՆԵՐ, ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ, ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿՆԵՐ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ, բուն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՌԵՐ, ՈՃԵՐ.— երկրագործական գործիքների, տնային կահ-կարասիների, բոյսերի, և այլն, անուններ. մի խօսքով՝ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՒՈՐ ԲՈԼՈՐ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

Մեզ բաւականաչափ նիւթ ուղարկողները, գրքի տպագրութիւնից յետոյ, մի մի օրինակ կ'ստանան, բացի այդ նոցա անուններն էլ կը տպագրուին գրքի մէջ:

Մեր հասցէն. Тифлисъ. Частная Лечебница, Доктору Багарату Навасартянцъ.

Տ. Նաւասարդեանց:

3—8

Արդէն մամուլի տակ է և շուտով լոյս կ'տեսնի նոր և ուրիշ գլուխներով աւելացրած, գեղեցիկ տառերով տպագրված «ՄՈՒՇԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ» Ազգային քնարական երգարանի առաջին հատորը, երկրորդ տպագրութեամբ, փոփոխած:

—

Սորա մէջ տպագրվում են, բացի հայրենիքի բանաստեղծութիւններից և ժողովրդականութիւն ստացած երգերից, նոյնպէս նոր և դեռ չը տպագրված երգեր և բանաստեղծութիւններ: Բացի դոցանից տպագրվում են և պատմուածքներ— прозы, որոնց ընդհանուր թիւը հասնում է մօտ 300-ի: Իւրաքանչիւր գրքի գինն է, կանխիկ բաժանորդ գրվողների համար, 1 րուբլ:

Օտարաքաղաքացի ցանկացողները կարող են, քանի մի անձինք միասին և կամ առանձնապէս, դառնալ Բագու, «Մոլակի» հրատարակչին, հետեւեալ հասցէով. Аваку Григоріанцъ, Въ Баку.

ԹԻՖԼԻԶԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԵՐԷՆ ԳՐՔԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ.

Դուրս եկաւ մամուլի տակից Մովսէսի Խորենացւոյ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ. գինն է 80 կ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ԿՌՈՒԿ ԳՐԱՎԱՃ.» Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ.

1. ԳՐԻԳՈՐԵԱՆՑ Զ.—«Մարդակազմութեան տարրական դասեր», 18 պատկերներով դպրոցների համար. գինն է—50 կ:
2. ՂՈՒԿԱՍԵԱՆՑ Հ.—«Դասագիրք ընթերցանութեան». գինն է 60 կոպ:
3. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ Ն.—«Աշխարհագրութիւն գ. հատ. գինն է—60 կոպ:

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԸՆԿԱՆ

1. ԾԵՐԵՆՑԻ—«Թէոդորոս Ռշտունի»:
2. ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱՅԻ—«Մանկական ոտանաւորներ և երգեր»:

4—10

ТАКСА

На 1 мѣсяцъ съ 1 Февраля по 1 Марта 1881 г.

Хлѣба печенаго

Изъ пшеничной муки:

1-го сорта. . . . за 1 фун. 5 к.
2-го ,, ... за 1 фун. 4 к.

Изъ той же муки, печенаго въ торнѣ (туземной пекарнѣ):

1-го сорта. . . . за 1 фун. 6 к.
2-го ,, ... за 1 фун. 4½ к.

Изъ крупчатой съ смѣсью пшеничной муки (джварисъ-мамисъ пури):

Лавашей 1-го сорта за 1 фун. 7 к.
,, 2-го ,, . за 1 фун. 5½ к.
,, 3-го ,, . за 1 фун. 5 к.

Мяса говяжьяго

1-го сорта. . . за 1 фун. 10 к.
2-го ,, ... за 1 фун. 8 к.
Надхребная часть мяса, отдѣльно вырѣзная (суки) . за 1 фун. 17 к.

—Бараньяго за 1 фун. 12 к.

—Свинаго:

1-го сорта . . . за 1 фун. 12 к.
2-го сорта . . . за 1 фун. 11 к.

Խոնարհաբար խնդրում եմ այն պարոններին, որոնց մօտ գտնվում են «ՉԵՍԹԵՐՏՕՆԻ ԺԱՌԱՆԳ» անունով մի տպագրութեան թերթեր, շուտով վերադարձնել ինձ այն գրքի տպագրութեան ձեռնամուխ լինելու համար:

Այժմ գրքի տպագրուելուց անմիջապէս յետոյ կը տպագրուի մի հատորով «ՀԱՅԿԱԿԱՆ ՆՇԽԱՐՆԵՐ» անունով, որ կ'պարունակի իւր մէջ հայոց ժողովրդական դեռ եւս անտիպ ԵՐԳԵՐ, ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ, ԱՌԱԾՆԵՐ, ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿՆԵՐ, ՕՐՀՆՈՒԹԻՒՆՆԵՐ, ԱՆԷԾՔՆԵՐ, ԵՐԴՈՒՄՆԵՐ, ՆԱԽԱԳԱՇԱՐՈՒՄՆԵՐ և ԲԱՌԵՐ ՈՒ ՁԵՒԵՐ: Այս աշխատութիւնը բոլորովին պատրաստ է տպագրութեան համար:

Գիտ. քահանայ Ազնեւեանց (Ապարանեանց):

4—6

ՔՆԱՐԻԿ ՄԱՆԿԱԿԱՆ

Գիրքը լոյս տեսաւ և վաճառվում է Տփխիսի բոլոր հայ-գրավաճառներում և առ այժմ հետեւեալ գաւառական քաղաքներում —Ղզլարում, Շուշում, Ալէքսանդրաւպօլում, Ղարաքիլիսայում, Նախիջեւանում, Երեւանում և ինձ մօտ. հասցէն. Тифлисъ. Учителю Александру Араратьянцъ, фоминная улица № 15, д. Гр. Давришова. Ամեն առզ՝ գինը 40 կոպ. է, գումարով առնողներին զեղչում կլինի:

Աղէք. Արարատեանց:

Մամուլի տակ է, և շուտով լոյս կտեսնի և կ'ուղարկուի իւր բաժանորդներին «Մասունք, Փիլիզոփայական և բարոյական ինքնակրթութեան» գիրքը, հեղ. Ջօն Ստիւարտ Բլէկիի, թարգմ. Գրիգոր Շահբուդաղեանի:

4—7

ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԵՐԷՆ ԳՐՔԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Դուրս եկաւ և ծախվում է կենդրոնական և ուրիշ գրավաճառանոցներում Մօրիս-Բլօքի «ՓՈՔՐԻԿ ՁԵՌՆԱՐԿ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ» թարգմանած դանազան փոփոխութիւններով Ս. Պալասանեանց: Գինն է 50 կոպ.

1—6

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՏՈԿՈՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՎԱՐԿԻ ԸՆԿ.

փետրվարի 1-ից մինչև նոր կարգադրութիւն.

Վճարում է.	Վերցնում է.
1. ընթացիկ հաշւով.	1. Ցեղչման առևտրական մուրհակների 6 ամսով . . 8%
ա. հասարակ . 4%	2. Ցեղչման մուրհակների, ապահովութեամբ մնչարժ կայից . 8%
բ. Պայմանաւոր 4½%	3. Արժէթղթերի գրաւականով ընդունելիք պետական բանկայից 6 ամսով . 7½%
2 Դամարների աւանդ.	4. Սոմնաւոր ընթացիկ հաշիւ.
ա. Մինչև պահանջ 4%	ա. Ապահոված առևտրական թղթերով 8%
բ. 6 ամսով . 5½%	բ. Մուրհակներով ապահովացրած երկու բարաքաղութեամբ 8½%
գ. Մի տարով . 6%	5. Ցեղչման կտրոնների և թղթադրամների . . 8%
դ. Երկու տարով և աւելի 6%	

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԱՆ

Վճարում է.	Վերցնում է.
1. Ընթացիկ հաշւով 4%	1. Ցեղչման առևտրական մուրհակների մինչև 6 ամիս 8½%
2. մինչև պահանջ աւանդի . . . 4%	2. Արժէթղթերի գրաւականով.
3. 6 ամսական աւանդի 5%	ա. Ընդունելիք պետական բանկայից ½%
4. Երկու աւելի տարով աւանդի . 6%	բ. Աներաշխաւորելի պետական բանկայից 8½%
	3. Սոմնաւոր ընթացիկ հաշիւներ
	ա. Ապահովացրած արժէթղթերով . 8%
	բ. Ապահովացրած մուրհակներով . 9%

Ցանձնարարութիւններ 1/16% —2%.

ՓՈՍՏ—ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ.

Թիֆլիսից դէպի Փօթի դուրս է գնում.

	Ժամեր. առաւ.	կէս օր.	երեկ.	Տեղերի գինը. I կլ. ռ. կ.	II կլ. ռ. կ.	III կլ. ռ. կ.
Թիֆլիզ.	9. 21	12. 56	5. 18			
Մցխէթ	10. 11	1. 57	6. 27	1. 13	85	44
Գօրի .	11. 56	4. 35	9. 43	4.	3.	1. 53
Միխայլ.	1. 29	6. 15	11. 57	6. 30	4. 73	2. 42
		գիշեր				
Րիօն .	6. 56	1. 45		11. 25	8. 44	4. 31
Փօթի .				16. 31	12. 24	6. 26

Փօթիից դէպի Թիֆլիզ.

	Ժամեր. Առաւ.	երեկոյ.	գիշեր.	Տեղերի գինը. I կլ. ռ. կ.	II կլ. ռ. կ.	III կլ. ռ. կ.
Փօթի .	9. 3	10. 22				
Րիօն .	12. 13	3. 30		5. 13	3. 84	1. 97
Միխայլ.	5. 39	10. 1	1. 37	10. 1	7. 51	3. 84
		կէսօր.				
Գօրի .	7. 5	12. 20	4. 8	12. 33	9. 24	4. 73
Մցխէթ	8. 50	3.	7. 59	15. 19	11. 39	5. 82
Թիֆլիս				16. 31	12. 24	6. 26

Առաջին գնացքը Թիֆլիզ հասնում է 9 ժ. 31 ր. առաւօտեան, երկրորդը 3 ժ. 51 ր. կէսօրից յետ և երրորդը 7 ժ. 56 ր. առաւօտեան:

ՉԵՆ ՀԱՍՑՐԱԾ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Ուսեփան Ջակէլին, Արմէն Բաքուրաձէին, Գիգոլաշվիլին, Ցրէդմանին, Նազվալովին, Ռուլևտովին, Ավակովին, Կիսից Ալէքսանդրովին, Դրուժինինին:

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Կուկիայում, Միխէօնովսկի փողոցի վրայ, Հախվերդեանի տանը:

Հիւանդներին ընդունում են ամեն օր, նաև տօն օրերին առաւօտեան ժամի 9—11. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—խիրուրգիական և վեներական (սիֆիլիսական) հ., ՐՈՒԴԿՕՎՍԿԻ — կանանց և ներքին հ., ժամի 11—1., ԼՈՒՆԿԵՎԻՉ—աչքերի, կաշուի և վեներական հ., ՇԱՀԱԶԻԶԵԱՆՑ — ներքին հ. ժամի 5—7. ՊԱՎԼՕՎՍԿԻ—Ջղային, հոգեկան և ներքին հ., ՈՒՇԱԿՈՎ—երեխայոց հ., ԾԱՂԿԱՀԱՏՈՒԹԻՒՆ առաւօտեան ժամի 9—11, չորեքշաբթի և շաբաթ օրերը երեկոյեան ժամի 7—8 ընդունում ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ: Հիւանդանոցը ունի զիջելապատ բժիշկ և ընդունում է ԳԻՇԵՐՕԹԻ հիւանդներ:

ԱՂՔԱՏՆԵՐԻՆ անվարձ է բժշկական խորհուրդը և դեղը:

Հիւանդանոցում բնակվում է բժիշկ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԸ:

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը սկսվում է ժամը 9-ին և շարունակվում է մինչև 1 կէսօրից յետ:

Երկուշաբթի.—Դավրօնսկի մանկաբարձական և կանանց հիւանդութեանց համար, Գարալէվիչ և Լիսիցին ներքին հ., Բօտկինեանց կանանց և երեխայոց հ., Բարայեան ջղային և ներքին հ., Շանմօրսկի վեներական և կաշուի հ., Փիւշարեանց 1-ն խիրուրգիական և աչքի հ.:

Երեքշաբթի.—Մինկէվիչ խիրուրգիական հ., Բէյեր աչքի հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխայոց հ., Լիսիցին և Վերմիշև ներքին հ., Պետրովսկի վեներական հ.:

Չորեքշաբթի.—Կրասնոգլեադով և Լիսիցին ներքին հ., Փիւշարեանց 2-դ և Շանմօրսկի սիֆիլիսական և կաշուի հ.:

Հինգշաբթի.—Դավրօնսկի մանկաբարձական և կանանց հ., Բէյեր աչքի հ., Բոտկինեանց կանանց և երեխայոց հ., Բարայեան ջղային և էլեկտրականութեամբ բժշկելի հ. (электротерапія), Լիսիցին և Պետրովսկի ներքին հ., Փիւշարեանց սիֆիլիսի և սկաւական հ.:

Ուրբաթ.—Մինկէվիչ խիրուրգիական հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխայոց հ., Կրասնոգլեադով Լիսիցին և Վերմիշև ներքին հ., Շանմօրսկի վեներական և կաշուի:

Շաբաթ. — Լիսիցին ներքին հ., Բէյեր աչքի հ., Բարայեան ջղային և ներքին հ., Փիւշարեանց 2-դ կանանց և ներքին հ., Պետրովսկի վեներական հ.:

Օրերի տասածի հ. ընդունում է իր մօտ եկած հիւանդներին ամենայն ժամանակ բժշկանոցի տանտէրը:

Դիրեկտոր բժշկանոցի բժ. Լիսիցին:

ՓՈՍՏ

Թիֆլիսի փոստի կանտորաներում մէկ ընդունվում են և տրվում, ամեն տեսակի և ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փոստի իրեր, ամենայն օր, բացի տօն օրերը, առաւօտեան 8 ժամից մինչև 1 կէսօրից յետ: Բացի դրանից ամեն օր, բացի կիւրակէ և տօն օրերը, առաւօտեան ժամը 7-ից մինչև 8 և 3-ից մինչև 7 ը կէսօրից յետ, իսկ կիւրակէ և տօն օրերը 7 ժամից մինչև 10 առաւօտեան և 3-ից մինչև 7 կէսօրից յետ, ընդունվում են և տրվում հասարակ նամակներ:

Ռուսաստանի և արտասահմանի փոստը դուրս է գնում Թիֆլիսից ամեն օր բացի կիւրակէ և տօն օրերը, Փօթիի պոստը (երկաթուղիով) ամեն օր, Կոխետեան կողմերը երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ, Նուխուոյ և Կախեթիայ կիւրակէ և չորեքշաբթի, Բաղուինը, Ալեքսանդրօպոլի վրայով երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ:

Ն ա մ ա կ ն ե ր.

Քաղաքային փոստով նամակն արժէ 3 կ.:

Բաց նամակ ստար քաղաքներ. 3 կոպ.:

Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները ծածկված նամակը արժէ (1/6 լոտի ծանրութեամբ) 7 կ.:

Պատուիրած նամակների գինը կրկնակի է:

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ 6-го ФЕВРАЛЯ 1881 г. Типографія Амб. Энфіаджянцъ К°.

Տան բժշկապետ Մ. Ռոստոմեանց: